ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ ՈՒԹՍՈՒՆԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՕՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Նոյեմբերի 24-ին, հինգշաբթի, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, նշվեց Կոստանդնուպոլսի պատրիարք ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի ծննդյան 80-ամյակը և ուսուցչական, գրական, հովվական գործունեության 60-ամյակը։

Հանդեսի բացումը կատարեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Աբրահամյանը, ծանրանալով ծերունազարդ հոբելյար պատրիարքի եկեղեցական բեղուն գործունեության վրա, Արմաշից մինչև Ս. Խաչ։

Հոգևոր Ճեմարանի ավագ վերակացու արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը հանգամանորեն ներկայացրեց Գարեգին պատրիարքի ուսանելի կյանքը և նրա գրական, ուսուցչական և հովվական գործունեությունը։

Հանդիսության ընթացքում արտասանվեցին հոբելյար սրբազանի գրչին պատկանող հատվածներ Նարեկի աշխարհաբար թարգմանությունից, «Տարոնաշունչ»-ից և «Հաշտիշատ» բանաստեղծությունը։ Հոգևոր Ճեմարանի երգչախումբը հանդեսին իր մասնակցությունը բերավ մի շարք երգերի և շարականների կատարմամբ։

Հանդեսի վերջում Վեհափառ Հայրապետը ջերմորեն խոսեց Գարեգին պատրիարքի բարոյական, իմացական մնայուն և ուսանելի արժանիքների մասին և հայրապետական Իր օրհնությունը տալով, հորդորեց սրբազանին մտատիպար ունենալ որպես ազնիվ եկեղեցականի, մտքի և գրչի մարդու և ժողովրդի ծառայության նվիրված հոգևորականի։

Գարեգին պատրիարքի ծննդյան 80-ամյակին նվիրված հանդես-երեկույթը վերջացավ Վեհափառ Հայրապետի պահպանիչով և խմբովին երգված «Հայր մեր»-ով։

Ճեմարանի վերատեսուչ Տ. Հայկազուն սրբազանը, Ճեմարանի վերատեսչության, ուսուցչական կազմի և ուսանողության անունից հոբելյար պատրիարք սրբազան հոր ուղղեց հետևյալ շնորհավորական հեռագիրը.

«Այսօր, 24 նոյեմբերին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Ս. Էջմիածնի միաբանությունը, ուսուցչական կազմը, պաշտոնեությունը և Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը պատշաճ հանդեսով մը նշեցին Ձերդ Ամենապատվության ծննդյան 80-ամյակը, Ճեմարանի հարկի տակ։

Ջերմապես կմաղթենք Ձեզ երկար կյանք, ի բարգավաճումն և ի միասնություն Հայաստանյայց Եկեղեցվո»։